[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
27	Մայիս	2019 թ.		Բ	6554575353
[4] Առաքման ամսաթիվ					
27	Մայիս	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր — Համար: Ամսաթիվ:
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկի գումար	Այդ թվում՝ արտաքին հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 30101019բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող՝
(անունը, ազգանունը)

27/05/2019 09:29:35

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 25 » փետրվարի 2019թ. գ.Ախուրյան

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Է.Միքայելյանս, վերանայելով վարույթիս թիվ 30101019 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Գյումրի քաղաքի բնակիչ՝ Սամսոն Լյովայի Եղիազարյանը, 2019 թվականի փետրվարի 09-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքի սննդի վաճառակետերից մեկից գնել է օղի, հյութ, <<Ախթամար>> տեսակի ծխախոտներ և պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել է Շիրակի մարզի Ախուրյան գյուղի Կոմիտասի փողոցի 32-րդ շենքի Գագիկ Մանուկյանի թիվ 10-րդ բնակարան: Վերջինիս հետ հաց ուտելու և օղի խմելու ընթացքում կենցաղային բնույթի հարցերով ունեցած խոսակցության ընթացքում, խոսքերով միմյանց չհասկանալու պատճառով, վիճաբանել են և Սամսոն Եղիազարյանը, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ, ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Գագիկ Մանուկյանի գլխին և դեմքին, պատճառելով գլխի մազածածկ հատվածի, քթի շրջանի փափուկ հյուսվածքների ալջարդ, այնուհետև իր մոտ ունեցած դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ նրա առողջությանը պատճառելով հեմոռագիկ շոկով ուղեկցված կրծքավանդակի և որովայնի կտրած-ծակած թափանցող, ձախ վերին վերջույթի կտրած-ծակած վերքերի ձևերով մարմնական վնասվածքներ:

Փաստի առթիվ 2019 թվականի փետրվարի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 30101019 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի փետրվարի 10-ին՝ ժամը 11:40-ին, վերը նշված հանցավոր արարքը կատարելու կասկածանքով Սամսոն Լյովայի Եղիազարյանը ձերբակալվել է:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ 2019 թվականի փետրվարի 12-ին Սամսոն Լյովայի Եղիազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, որպես խափանման միջոց կիրառվել կալանավորումը և նա տեղափոխվել է <<Արթիկ>> քրեակատարողական հիմնարկ:

<<Գյումրու հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲ ընկերությունից ստացված տեղեկանքների համաձայն՝ Սամսոն Լյովայի Եղիազարյանը հիշյալ կենտրոնի նյարդահոգեբուժական դիսպանսերում հաշվառման մեջ չի գտնվում, իսկ 08.02.2012 թվականից գտնվում է հաշվառման մեջ հիշյալ հիվանդանոցի նարկոլոգիական դիսպանսերում՝ <<ափիոնային և կաննաբինոլային թմրամոլություն>> ախտորոշմամբ:

Քրեական գործին կցվել է մեղադրյալ Սամսոն Լյովայի Եղիազարյանի նախկին 08.10.2009 թվականի Արագածոտն մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԱԴ/0017/01/19 դատավճռի պատճենն, որում տվյալներ կան, որ Սամսոն Լյովայի Եղիազարյանի մոտ հայտնաբերվել է <<անձի օրգանական խանգարում>> հիվանդությունը:

Նկատի ունենալով, որ Սամսոն Լյովայի Եղիազարյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245 և 248-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Վարույթիս թիվ 30101019 քրեական գործով նշանակել ամբողջատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին:

2.Փորձագետին առաջադրել ներքոհիշյալ հարցերը.

ա/ մեղադրյալ Սամսոն Լյովայի Եղիազարյանը նախկինում և վերը նկարագրված հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե մեղադրյալ՝ Սամսոն Լյովայի Եղիազարյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

գ/ մեղադրյալ՝ Սամսոն Լյովայի Եղիազարյանը ներկայումս տառապո՞ւմ է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ՝ Սամսոն Լյովայի Եղիազարյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ՝ Սամսոն Լյովայի Եղիազարյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյա Սամսոն Լյովայի Եղիազարյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը, ինչպես նաև հանրության համար վտանգ ներկայացնո՞ւմ է, թե՞ ոչ:

է/ եթե Սամսոն Եղիազարյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ելնելով նրա հոգեկան վիճակից, կարող է մասնակցել դատաքննչական գործողությունների, թե ոչ:

3. Փորձագետին տրամադրել Սամսոն Լյովայի Եղիազարյանին և քրեական գործի նյութերի էլեկտրոնային տարբերակը լազերային կրիչով:

4. Հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

5. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինել քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ Ա. Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ